«Տնտեսագիտության հիմունքներ» առարկայի ծրագիր

և ուսուցման մեթոդական ուղեցույց

միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատությունների համար

ԵՐԵՎԱՆ – 2009

ԲԱՑԱՏՐԱԳԻՐ

Ծրագիրը նախատեսված է Հայաստանի Հանրապետությունում միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում սովորողներին «Տնտեսագիտության հիմունքներ» առարկան ուսուցանելու նպատակով: Ծրագիրը նախատեսված է միջին մանսագիտական կրթության ոչ տնտեսագիտական ուղղվածություն ունեցող մասնագիտությունների համար:

Ժամանակակից աշխարհում կարևորվում է կրթական գործընթացի պահանջը, քանի որ նեղ մասնագիտական կրթության գերիշխանության պայմաններում գոյանում են մասնագիտական հանրություններ, որոնց ներակայացուցիչները միմյանց հետ հաղորդակցվելու ընդհանուր գիտելիքների հիմքից զուրկ լինելու պատճառով, որպես կանոն բախվում են:

Կրթության մեջ տեխնիկական միջոցների ներդրման հարաճուն միտումներին դրականապես հակազդելու և ժամանակակից աշխարհում ի հայտ եկած մի շարք համընդհանուր հիմնախնդիրներ լուծելու տեսանկյունից ավելի ու ավելի է կարևորվում տնտեսագիտություն ուսանելու անհրաժեշտությունը միջին մասնագիտական կրթական ծրագիր իրականացնող ուսումնական հաստատություններում:

«Տնտեսագիտության հիմունքներ» առարկայի ծրագրի մեջ ընդգրկված են միկրոտնտեսագիտության, մակրոտնտեսագիտության և միջազգային տնտեսագիտության կարևոր թեմաները, որոնց յուրացումը սովորողների կողմից խիստ կարևորվում է շուկայական տնտեսական համակարգի կայացման պայմաններում:

Տնտեսագիտական գիտելիքներին տիրապետելը սովորողներին թույլ կտա նախևառաջ ըմբռնել, թե ինչպես են անհատները, տնային տնտեսությունները, ձեռնարկությունները, արտադրությունները և կառավարությունը որոշումներ կայացնում առկա ռեսուրսների ու հնարավորությունների վերաբերյալ՝ իրենց բազմաբնույթ և բազմապիսի պահանջմունքների առավել լրիվ բավարարման նպատակով:

Տնտեսագիտության հիմունքների ուսումնասիրությունը սովորողներին հնարավորություն կտա ոչ միայն հասկանալ ու գնահատել երկրի տնտեսության վիճակը, այլ նաև ներգրավել իրական տնտեսական գործընթացներում, կարևորել շուկայական տնտեսության նշանակությունը հասարակական կյանքի այլ կողմերի

վրա, կհասկանան, թե ինչպես են գործում շուկայի օրենքները, ինչպես է դրանցով կարգավորվում մարդկանց տարերային տնտեսական գործունեությունը: Սովորողները կառնչվեն տնտեսության մեջ ծագող պատասխանատվության ու գործարար տնտեսագիտության հիմնասխնդիրներին:

Թեմատիկ պլանավորում

/h.	Թեմա	Տեսական	Գործնական
.	Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսագիտությունը	2 ժամ	2 ժամ
.	Տնտեսագիտության նպատակները և խնդիրները: Արտադրության փուլերը: Տնտեսական աճ	2 ժամ	2 ժամ
.	Շուկայական տնտեսություն	2 ժամ	2 ժամ
.	Փողը և նրա գործառույթները	1 ժամ	1 ժամ
.	Պահանջարկ, պահանջարկի օրենքը, կառուցվածքը և դրանց վրա ազդող գործոնները	1 ժամ	1 ժամ
.	Առաջարկ, առաջարկի օրենքը, կառուցվածքը և դրանց վրա ազդող գործոնները	1 ժամ	1 ժամ
.	Արտադրության գործոնները և գործոնային եկամուտները	2 ժամ	2 ժամ
.	Ձեռնարկություն: Ձեռնարկատիրական գործունեություն	2 ժամ	2 ժամ
.	Սպառողներ, ներդրողներ և խնայողներ	2 ժամ	1ժամ
0.	Արտադրության ծախքեր և շահույթ	2 ժամ	1ժամ
1.	Արտադրության գործոնները և գործոնային եկամուտները	2 ժամ	1 ժամ
2.	Բանկերի էությունը: Վարկ և արժեթղթեր	2 ժամ	1 ժամ
3.	Ինֆլյացիա և հակաինֆլյացիոն քաղաքականություն	2 ժամ	2 ժամ
4.	Պետության սոցիալական քաղաքականությունը	2 ժամ	2 ժամ
5.	Կառավարությունը և տնտեսությունը	1 ժամ	1 ժամ
6	Համաշխարհային տնտեսություն	1 ժամ	1 ժամ
7	Ընտրովի թեմա ուսումնական հաստատության ընտրությամբ	2 ժամ	-
	Ընդամենը՝	31 ժամ	23 ժամ

Թեմա 1. Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսագիտությունը

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել, որ տնտեսագիտությունը՝ որպես գիտություն ուսումնասիրում է մարդկանց վարքագիծը սահմանափակ ռեսուրսների պայմաններում: Ռեսուրսների սահմանափակության պարագայում առկա են դրանց օգտագործման բազմաթիվ այլընտրանքներ, որոնցից ընտրվում է լավագույն կամ ռացիոնալ տարբերակը: Ելնելով դրանից՝ տնտեսագիտությունը համարում են գիտություն սահմանափակ ռեսուրսների օգտագործման ընտրության մասին:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- ռեսուրսի բովանդակությունը և դրա տեսակները,
- բարիքի տնտեսագիտական բովանդակությունը,
- բացատրել տնտեսական արդյունավետությունը,
- այլընտրանքային արժեքի բովանդակությունը,
- որ արտադրական հնարավորությունները սահմափակ են:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան

- սահմանել տնտեսագիտության առարկան,
- ընկալել, որ ռեսուրսների սահմանափակության պայմաններում արտադրության հնարավորությունները սահմանափակ են և այդ հիմքի վրա ներկայացնել արտադրական հնարավորությունների կորը,
- պայմանական օրինակների միջոցով ներկայացնել այլընտրանքային արժեքի բովանդակությունը:

Թեմա 2. Տնտեսագիտության նպատակները և խնդիրները: Արտադրության փուլերը: Տնտեսական աճ

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել տնտեսագիտության նպատակները և խնդիրները, արտադրության փուլերը, դրանց փոխադարձ կապը, տնտեսական աճի բովանդակությունը, որոնք բոլոր ժամանակներում կազմել են մարդկանց գոյության և կենսապայմանների բարելավման հիմքը: Ռեսուրսների սահմանափակության պայմաններում դրանց ռացիոնալ օգտագործումը տրամաբանորեն ենթադրում է բացահայտել տնտեսության նպատակները և խնդիրները:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- թե որոնք են տնտեսագիտության նպատակները և խնդիրները,
- թե տնտեսական գործունեության փուլերից որն է առաջնայինը,
- թե որոնք են տնտեսական համակարգերի տեսակները,
- թե ինչ է իրենից ներկայացնում համախառն ներքին արդյունքը (ՀՆԱ):

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- բացատրել արտադրության փուլերը, դրանց փոխադարձ կապը, տնտեսական աճի բովանդակությունը,
- օրինակների միջոցով բացատրել բաշխումը,փոխանակությունը և սպառումը,
- ընկալել անվանական և իրական համախառն ներքին արդյունքի բովանդակությունը,
- հիմնավորել երեք հիմնական խնդիրները. ի՞նչ արտադրել, ինչպե՞ս արտադրել և ու՞մ համար:

Թեմա 3. Շուկայական տնտեսություն

Թեմայի նպատակն է սովորողներին բացատրել շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները և ներկայացնել դրա ընդհանուր բնութագիրը: Այս համատեքստում հատկապես կարևոր է, որպեսզի սովորողը հստակորեն ընկալի սեփականության էությունը: Շուկայական տնտեսությունը հիմնված է բարիքների փոխանակության վրա: Բարիքները փոխանակվում են ըստ իրենց արժեքի: Հետևաբար պետք է բացատրել, թե ո՞րն է բարիքի արժեքը և ինչպե՞ս է որոշվում դրա մեծությունը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- շուկայական տնտեսության ձևավորման նախադրյալները,
- սեփականության ձևերը,
- շուկայական տնտեսության սուբյեկտները և օբյեկտները,
- բարիքի արժեքի բովանդակությունը և մեծությունը,

- աշխատանքի բաժանման, ռեսուրսների նկատմամբ սեփականության ձևավորման անհրաժեշտությունը, արտադրողների տնտեսական առանձնացումը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան

- բացատրել, թե որոնք են ազատ ձեռնարկատիրության հենասյուները,
- ներկայացնել, թե ինչ դեր ունի շահույթը ազատ ձեռնարկատիրական համակարգում,
- բացատրել, թե ինչպես է որոշվում բարիքի արժեքի մեծությունը և ինչով է դա պայմանավորված:

Թեմա 4. Փողը և նրա գործառույթները

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել փողի ծագման պատճառները և էությունը, ներկայացնել գնի բովանդակությունը, փողի գործառույթները և դրանց դերը տնտեսության արդյունավետության բարձրացման գործում, պարզաբանել ազատ դրամական միջոցների առաջացման հանգամանքները:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- փողի ծագումը և էությունը,
- գինը՝ որպես բարիքի արժեքի դրամական արտահայտություն,
- փողի գործառույթները և դրանց դերը տնտեսության արդյունավետության բարձրացման գործում,
- ազատ դրամական միջոցների առաջացման պատճառները,
- փողի վճարման միջոցի և կուտակման միջոցի գործառույթների փոխադարձ կապը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- բացատրել փողի ծագման անհրաժեշտությունը,
- պարզաբանել ոսկուն՝ փողի դերի ամրագրման պատճառները,
- բացատրել, թե մարդկանց միջև ինչպիսի՞ փոխհարաբերություններ է առաջացնում փողի վճարման գործառույթը,

- հասկանալ, որ փողի վճարման միջոցի գործառույթը պայմանավորված է բարիք արտադրողների միջև պարտքային պարտավորությունների ձևավորման անհրաժեշտությամբ:

Թեմա 5. Պահանջարկ, պահանջարկի օրենքը, կառուցվածքը և դրանց վրա ազդող գործոնները

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել պահանջարկի օրենքը, պարզաբանել պահանջարկի վրա ազդող գործոնները, առաձգականության բովանդակությունը: Դրանց իմացությունը կարևորվում է նրանով, որ շուկայական տնտեսության մեջ առաջնային դերը պատկանում է պահանջարկին, որովհետև մարդկանց պահանջարկն է որոշում, թե ֆիրմաները ի՞նչ բարիքներ պետք է արտադրեն: Այսինքն՝ շուկայական տնտեսության մեջ առկա է սպառողի գերակայությունը արտադրողի նկատմամբ:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- թե ինչ է պահանջարկը,
- թե որոնք են պահանջարկի ոչ գնային գործոնները,
- թե որոնք են փոխադարձ փոխարինելի և փոխլրացնող բարիքները,
- թե որն է պահանջարկի առաձգականության էությունը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- ներկայացնել պահանջարկի բովանդակությունը,
- բացատրել պահանջարկի օրենքը և գծապատկերի միջոցով ներկայացնել պահանջարկի կորը,
- ընկալել պահանջարկի ոչ գնային գործոնները և դրանց ազդեցությունը ներկայացնել գծապատկերի միջոցով,
- բացատրել, թե որ դեպքերում է պահանջարկը համարվում առաձգական, հավասարաչափ առաձգական և ոչ առաձգական,
- բացատրել,թե ինչպես է որոշվում պահանջարկի առաձգականության գործակիցը,
- օրինակով ներկայացնել, թե որ դեպքում պահանջարկն ըստ գնի կլինի առաձգական,

- հաշվել պահանջարկի առաձգականության գործակիցը և ըստ դրա մեծության՝ կառուցեն պահանջարկի կորը

Թեմա 6. Առաջարկ, առաջարկի օրենքը, կառուցվածքը և դրանց վրա ազդող գործոնները

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել առաջարկի օրենքը, պարզաբանել առաջարկի վրա ազդող ոչ գնային գործոնները, առաձգականության բովանդակությունը: Դրանց իմացությունը կարևորվում է նրանով, որ արտադրողը շուկայում կողմնորոշվում է՝ ըստ առաջարկի վրա ազդող գնային և ոչ գնային գործոնների փոփոխության:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- թե ինչ է առաջարկը և որն է առաջարկի օրենքը,
- առաջարկի վրա ազդող ոչ գնային գործոնները,
- առաջարկի առաձգականության էությունը և տեսակները:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- բացատրել առաջարկի օրենքը և գծապատկերի միջոցով ներկայացնել առաջարկի կորը,
- բացատրել, թե որոնք են առաջարկի փոփոխության ոչ գնային գործոնները,
- բացատրել, թե որոնք են առաջարկի առաձգականության տեսակները,
- բացատրել, թե ինչպես է չափվում առաջարկի առաձգականության գործակիցը և ըստ դրա մեծության կառուցել առաջարկի կորը,
- բացատրել, թե ինչ տարբերություն կա ոչ առաձգական և ամբողջությամբ ոչ առաձգական առաջարկի միջև,
- դիտարկել պայմանական օրինակ, որի դեպքում առաջարկը ըստ գնի լինի առաձգական:

Թեմա 7. Արտադրության գործոնները և գործոնային եկամուտները

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել արտադրության գործոնների և գործոնային եկամուտների բովանդակությունը:

Դրանց իմացությունը կարևորվում է նրանով, որ տնտեսությունը հիմնված է արտադրության գործոնների միացման գործընթացի վրա, որի արդյունքում ստեղծվում է այս կամ այն բարիքը: Ըստ բարիքի արտադրության մասնակցության չափի՝ արտադրության գործոնների սեփականատերերը ստանում են իրենց փոխհատուցումը աշխատավարձի, տոկոսի և ռենտայի ձևով, որոնք էլ հանդիսանում են նրանց նյութական շահագրգռվածության հիմքը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- արտադրության գործոնների և գործոնային եկամուտների բովանդակությունը,
- աշխատավարձի՝ որպես գործոնային եկամտի բովանդակությունը,
- շուկայի առանձնահատկությունները,
- կապիտալի բովանդակությունը,
- տոկոսի էությունը,
- հողի առանձնահատկությունները,
- ռենտայի բովանդակությունը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- ըմբռնել անվանական և իրական աշխատավարձի տարբերությունները,
- ներկայացնել աշխատանքի շուկայի առանձնահատկությունները,
- հասկանալ տոկոսի՝ որպես գործոնային եկամտի էությունը,
- նկարագրել հողի՝ որպես արտադրության գործոնի բնույթը և առանձնահատկությունները,
- բացատրել ռենտայի՝ որպես արտադրության գործոնի բովանդակությունը:

Թեմա 8. Ձեռնարկություն: Ձեռնարկատիրական գործունեություն

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել ձեռնարկատիրության բնույթը, պարզաբանել արտադրության համար

անհրաժեշտ ծախսերի տեսակները և ձեռնարկության շահույթի բովանդակությունը: Պետք է պարզ դառնա, որ տնտեսության զարգացման գործում էական է ձեռնարկատիրության դերը՝ կապված նորարարական ձգտումների, ստեղծված իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու և ռիսկի գնալու պատրաստակամության հետ:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- ձեռնարկության ֆունկցիաները և դասակարգումը,
- արտադրության հասատատուն և փոփոխական գործոնները,
- սեփականատիրոջ և ձեռներեցի տարանջատումը, ձեռներեցը և նրա ֆունկցիաները, տնտեսական ռիսկ,
- ձեռնարկատիրական գործունեության ձևերը,
- ձեռնարկատիրական գործունեության տեսակները:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- բացատրել ձեռնարկատիրական գործունեությունը որպես արտադրության գործոն և տնտեսավարման եղանակ,
- թե ինչ դեր ունի շահույթը ազատ ձեռնարկատիրական համակարգում,
- բացատրել սեփականատիրոջ և ձեռներեցի տարանջատման էությունը,
- բացատրել անհատական, ընկերակցային և բաժնետիրական ընկերությունների առավելություններն ու թերությունները,
- օրինակներով ներկայացնել տնային տնտեսությունների և գործարար ձեռնարկությունների միջև տեղի ունեցող շրջապտույտը,
- բացատրել, թե ինչ դեր ունի ձեռներեցությունը տնտեսական աճի գործում:

Թեմա 9. Սպառողներ, ներդրողներ և խնայողներ

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել վարկային հարաբերությունների և արժեթղթերի շրջանառության ձևավորման անհրաժեշտությունը: Պետք է պարզ դառնա, որ վարկային հարաբերությունները և արժեթղթերի շուկան մեծ չափով նպաստում են տնտեսության զարգացմանը: Դրանց միջոցով կապիտալը հոսում է այն

ոլորտը, որի բարիքների նկատմամբ պահանջարկն ավելի մեծ է: Այս ճանապարհով է տեղի ունենում ռեսուրսների արդյունավետ բաշխում արտադրության տարբեր ոլորտների միջև:

Այս դասի արդյունքում սովորողները պետք է իմանան

- տնային տնտեսությունների եկամուտները և նրա գործոնները,
- թե ինչ է ապահովությունը, շահադրույքը, իրացվելիությունը, խնայողական ավանդները, դրամաշուկայական ավանդային հաշիվները,
- վարկի առավելություններն ու թերությունները,
- ապահովագրությունը և սպառողների շահերը,
- կառավարությունը և սպառողների շահերը:

Այս դասի արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- օրինակներով ներկայացնել տնային տնտեսությունների եկամուտների հիմնական աղբյուրները,
- բացատրել, թե ինչ դեր ունի անձնական բյուջեն սպառողի և խնայողի տեսանկյունից,
- բացատրել, թե ինչ դեր ունեն ներդրումները հարստության աճման գործում,
- ներկայացնել, թե ապահովագրության ինչ տեսակներ են գործում մեր երկրում,
- բացատրել, թե ինչպես են պաշտպանվում սպառողների շահերը ազատ ձեռնարկատիրական տնտեսության մեջ:

Թեմա 10. Արտադրության ծախքեր և շահույթ

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել արտադրության համար անհրաժեշտ ծախսերի տեսակները և ձեռնարկության շահույթի բովանդակությունը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- արտադրության ծախքերի բնութագրումը և դասակարգումը
- այլընտրանքային, հաշվապահական, տնտեսական, սահմանային ծախքեր,
- հիմնական կապիտալի մաշվածության տնտեսական բովանդակությունը և ձևերը,

- շահույթը որպես գործոնային եկամուտ,
- հաշվապահական և տնտեսական շահույթ:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- բնութագրել հաստատուն և փոփոխուն, ներքին և արտաքին, համախառն ու միջին ծախքերը, կառուցել դրանց գծապատկերները,
- օրինակով բացատրել նվազող հատույցի օրենքը,
- բացատրել ամորտիզացիան և նրա նորման, արագացված ամորտիզացիայի հասկացությունը:

Թեմա 11. Արտադրության գործոնները և գործոնային եկամուտները

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել արտադրության գործոնների և գործոնային եկամուտների բովանդակությունը: Դրանց իմացությունը կարևորվում է նրանով, որ տնտեսությունը հիմնված է արտադրության գործոնների միացման գործընթացի վրա, որի արդյունքում ստեղծվում է այս կամ այն բարիքը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- թե ինչ է աշխատանքը և աշխատավարձը,
- թե որոնք են աշխատանքի շուկայի առանձնահատկությունները,
- գործազրկության պատճառներն ու տեսակները,
- թե ինչ է կապիտալը և տոկոսը,
- թե ինչ է հողը և ռենտան:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- բացատրել անվանական և իրական աշխատավարձի բովանդակությունը,
- բացատրել, թե ինչպես է սահմանվում նվազագույն աշխատավարձի և նպաստի չափը,
- բացատրել գործազրկության տեսակները (պարբերաշրջանային, ֆրիկցիոն և կառուցվածքային),
- տալ կապիտալի սահմանումը,

- ներկայացնել տոկոսը որպես գործոնային եկամուտ,
- ներկայացնել ռենտայի բովանդակությունը:

Թեմա 12. Բանկերի էությունը: Վարկ և արժեթղթեր

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել բանկերի էությունը, փողի էվոլյուցիան, տեսակները, գնողունակությունը և շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակության որոշման օրինաչափությունը: Պետք է պարզ դառնա, որ տնտեսության զարգացման գործում կարևոր է դրամաշրջանառության կարգավորումը, որն իրականացվում է առևտրային բանկերի արդյունավետ գործունեության միջոցով: Պետք է բացատրել, որ վարկային հարաբերությունները և արժեթղթերի շուկան մեծ չափով նպաստում են տնտեսության զարգացմանը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

-բանկերի առաջացումը և դրանց գործառնությունները,
- փողի էվոլյուցիան,
- թե ինչ է դրամական միավորի գնողունակությունը,
- վարկի էությունը և գործառույթները,
- վարկ և արժեթուղթ,
- արժեթղթերի բովանդակությունը և տեսակները,
- բաժնետոմս և տեսակները,
- դիվիդենտ և վերահսկիչ ծրար,
- թե ինչ է պարտատոմսը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- բացատրել, թե որն է բանկի շահույթը,
- բացատրել, թե որոնք են փողի տեսակները,
- որոշել շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակությունը,
- տրված օրինակների օգնությամբ հաշվել դրամական միավորի արագությունը,

- վերլուծել, թե ինչպես կփոխվի շրջանառության համար անհրաժեշտ փողի քանակությունը, եթե դրամական միավորի արագությունը մեծանա:
- բացատրել, թե ինչ է վարկը և ինչպես են ձևավորվել վարկային հարաբերությունները,
- բացատրել, թե ինչ է արժեթուղթը և որոնք են դրա տեսակները,
- բացատրել, թե ինչ է բաժնետիրական ընկերությունը, վերահսկիչ ծրարը և ինչպես է որոշվում բաժնետոմսի գինը:

Թեմա 13. Ինֆլյացիա և հակաինֆլյացիոն քաղաքականություն

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել, թե որո՞նք են ինֆլյացիայի պատճառները, ովքե՞ր են տուժում կամ շահում ինֆլյացիայից, ինչպե՞ս է ինֆլյացիան ազդում եկամուտների վերաբաշխման վրա:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- ինֆլյացիան և նրա պատճառները,
- դրամաշրջանառությունը և ինֆլյացիան,
- արտադրության անկումը և ինֆլյացիան,
- ինֆլյացիայի տեսակները, հետևանքները:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- հաշվարկել ինֆլյացիայի մակարդակը,
- բացատրել արտաքին շուկայի ազդեցությունը ինֆլյացիայի վրա,
- բացատրել ինֆլյացիայի տեսակները (սողացող, կանխատեսելի, անկանխատեսելի, բաց, ճնշված, պահանջարկի և առաջարկի, ծախքերի և շահույթի),
- ներկայացնել Ֆիլիպսի կորը,
- բացատրել հակաինֆլյացիոն քաղաքականության հիմնական ուղղությունները և մեխանիզմները:

Թեմա 14. Պետության սոցիալական քաղաքականությունը

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել սոցիալապես անապահով խավերին համապատասխան նյութական

օժանդակություն ցուցաբերելու և սոցիալական արդարություն հաստատելու անհրաժեշտությունը: Պետք է պարզ դառնա, որ սոցիալական ապահովման նպատակով անապահով խավերին ցուցաբերվող նյութական օժանդակությունն ունի ինչպես դրական, այնպես էլ որոշ բացասական հետևանքներ:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- որոնք են բնակչության եկամուտների աղբյուրները,
- ինչ են իրենցից ներկայացնում եկամուտների բաշխման ֆունկցիոնալ և անհատական եղանակները,
- եկամուտների անհավասարության պատճառները,
- Մաքս Լորենցի տեսությունը,
- Ջինիի գործակիցը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- բացատրել եկամտի բաշխման ֆունկցիոնալ և անհատական եղանակների տարբերությունը,
- բացատրել, թե որն է տնօրինվող եկամուտը,
- ներկայացնել Լորենցի կորի տնտեսագիտական բովանդակությունը,
- բացատրել, թե ինչպես է հաշվարկվում Ջինիի գործակիցը և դրա կապը հասարակության սոցիալական բևեռացման հետ,
- բացատրել, թե ինչ են տրասֆերտ վճարումները,
- թե որն է բացասական եկամտահարկի սկզբունքը:

Թեմա 15. Կառավարությունը և տնտեսությունը

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել, թե ինչպե՞ս է պետությունն ապահովում շուկաների արդյունավետ գործունեությունը, ինչպե՞ս է կառավարությունը ծախսում և հայթհայթում իր միջոցները, որո՞նք են գլխավոր համապետական հարկերը և ովքե՞ր են դրանք վճարում:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան՝

- թե ինչպե՞ս է պետությունն ապահովում շուկաների արդյունավետ գործունեությունը,
- թե ովքե՞ր են հարկ վճարողները,
- թե ինչպե՞ս է կառավարությունը հայթհայթում և ծախսում իր միջոցները,
- թե որոնք են գլխավոր համապետական հարկերը և ովքե՞ր են դրանք վճարում:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան

- բացատրել, թե ինչո՞վ են իրարից տարբերվում համամասնական, պրոգրեսիվ և ռեգրեսիվ հարկերը,
- բացատրել, թե ինչու՞ է պետությունը միջամտում տնտեսությանը,
- բացատրել, թե ինչու՞ են մարդկանց մտահոգում բյուջեի պակասուրդը և պետական պարտքը:

Թեմա 16. Համաշխարհային տնտեսություն

Թեմայի հիմնական նպատակն է սովորողներին բացատրել կապիտալի արտահանման, աշխատանքի միջազգային միգրացիայի, միջազգային արժութային հարաբերությունների օրինաչափությունները: Պետք է պարզ դառնա, որ կապիտալի արտահանումը հատկապես նպաստավոր է կապիտալ ներմուծող երկրի համար, որը նորագույն տեխնոլոգիաների ներդրման ճանապարհով նպաստում է տնտեսության զարգացմանը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է իմանան.

- թե ինչ է արտաքին առևտուրը,
- թե ինչ է կապիտալի արտահանումը, աշխատանքի միջազգային միգրացիան և միջազգային արժութային հարաբերությունները,
- թե ինչ է արժույթի փոխարժեքը,
- վճարային հաշվեկշիռը և դրա կառուցվածքը:

Այս թեմայի ուսումնառության արդյունքում սովորողները պետք է կարողանան.

- ներկայացնել աշխատանքի միջազգային բաժանման նախադրյալները,

- բացատրել բացարձակ առավելությունների սկզբունքը և դա ներկայացնել պայմանական օրինակի միջոցով,
- բացատրել հարարբերական առառվելությունների սկզբունքը և դա ներկայացնել պայմանական օրինակի միջոցով,
- պատկերացում կազմել աշխատանքի միջազգային միգրացիայի և դրա պատճառների մասին,
- ընկալել միջազգային արժութային հարաբերությունների բովանդակությունը,
- բացատրել կապիտալի շարժի հաշիվը:

«Տնտեսագիտության հիմունքներ» առարկայի ուսուցանման մեթոդական ուղեցույց

«Տնտեսագիտության հիմունքներ» առարկայի ուսուցանման մեթոդական ուղեցույցը նախատեսված է միջին մասնագիտական կրթության ոչ տնտեսագիտական ուղղվածություն ունեցող մասնագիտությունների համար: Այստեղ ներկայացված են դասի պլանի նմուշ օրինակներ, թեստի օրինակներ, գործնական վարժությունների օրինակներ, մեթոդների նկարագրություն և գրականության ցանկ:

Դասի պլան (նմուշ օրինակ)

Թեմա. Ի՞նչ է ուսումնասիրում տնտեսագիտությունը

Դասի ընթացքը.

Դասը սկսվում է մարդու պահանջմունքների պարզաբանմամբ: Անհրաժեշտ է բացատրել, որ մարդու գործունեության հիմքում նրա պահանջմունքների բավարարման անհրաժեշտությունն է: Դրա համար դասախոսը ներկայացնում է մի շարք օրինակներ, որոնք հաստատեն այդ թեզի ճշմարտացիությունը:

Սովորողներին պետք է պարզ լինի, որ պահանջմունքները բավարարվում են համապատասխան բարիքների արտադրության միջոցով: Կարևոր է շեշտել, որ բարիքներ արտադրելու համար անհրաժեշտ են համապատասխան ռեսուրսներ: Հետևաբար՝ դասի հաջորդ փուլում պետք է պարզաբանվի ռեսուրսի բովանդակությունը և դրա տեսակները:

Դասի տրամաբանական շարունակությունը պետք է լինի սահմանափակ ռեսուրսների արդյունավետ օգտագործման անհրաժեշտության կարևորումը:

Բացատրության ժամանակ պետք է հիմնավորել, որ ռեսուրսների արդյունավետ օգտագործման անհրաժեշտությունը մարդու վարքագիծը դարձնում է ռացիոնալ:

Դասի նպատակից բխող կարևոր եզրակացությունը պետք է լինի հետևյալ ճշմարտությունը՝ ռեսուրսների սահմանափակության պատճառով արտադրության հնարավորությունները սահմանափակ են: Կարևոր է բացատրել, որ գոյություն ունեն բարիքների արտադրության բազմաթիվ տարբերակներ կամ այլընտրանքներ և այդ հիմքի վրա սովորողը պետք է հստակ պատկերացում կազմի այլընտրանքային արժեքի մասին:

Կիրառվող մեթոդներ և հնարներ

Զրույց, հարց ու պատասխան, մտագրոհ, տրամագիր, դասախոսություն, բլից- հարցում, թեստային աշխատանք, գործնական աշխատանք:

Գործնական աշխատանք.

Վարժություն. Ինչու՞ են մարդիկ առևտուր անում

Նպատակը- սովորողները պետք է բացատրեն առևտրին մասնակցելու իրենց դրդապատճառները, թվարկեն առևտրից սպասվող ծախսերը և եկամուտները, իրենց առևտրի փաստացի հետևանքները:

Տևողությունը. 45 րոպե

Անհրաժեշտ պարագաները. փոքրիկ հեշտ փոխարինելի իրեր՝ շոկոլադե սալիկներ, չամիչի տուփեր, ցորենի հատիկներ, մատիտներ, մետաղադրամներ, թեստի պատասխաններ:

Ընթացքը.

1. Սովորողներին ասեք, որ նրանք հնարավորություն ունեն իրականացնելու առևտուր:
2. Մտագրոհի միջոցով հարցրեք. «Ինչու՞ են մարդիկ առևտուր անում»: Պատասխանները գրեք գրատախտակին: Նշեք, որ այդ պատասխանները վարկածներ են: Աշխատանքն ավարտելուց հետո պետք է գտնել փաստեր՝ վարկածն ապացուցելու կամ հերքելու համար:

Ընթացքը. ապրանքները անհավասար բաշխեք սովորողների միջև, տրամադրեք 10 րոպե, իրականացնելու համար ցանկացած առևտրային գործարք: Ավարտից հետո խնդրեք, որ սեղանների վրա դնեն իրենց վերջնական ունեցվածքը:

Հարցեր.

1. Քանի՞սն են առևտուր արել:
2. Ի՞նչ իրեր են փոխանակել:
3. Ավելի շատ փոխանակե՞լ են, թե՞ դրամով գնել:
4. Ո՞վ է առևտուր արել մեկ անգամից ավելի:

5. Ովքե՞ր են առևտրի ընթացքում հրաժարվել իրենց սիրելի իրերից:

6. Արդյոք չե՞ն դժգոհում քիչ քանակությամբ իրեր ունեցողները:

7. Որո՞նք էին առևտրի վնասները և օգուտները:

8. Ո՞ր առումներով է իրականացված առևտուրը նման «իրական աշխարհում» իրականացվող առևտրին:

Քննարկել:

Թեմա 1.

Հարց ու պատասխան

Բ սյունակից ընտրել Ա սյունակի յուրաքանչյուր տերմինին համապատասխանող պատասխանը:

Ա սյունակ	Բ սյունակ
1. Տնտեսագիտություն	ա. Արտադրական ռեսուրսների կամ սպառողական ապրանքների առաջարկի անբավարարությունը՝ համեմատած արտադրողների կամ սպառողների պահանջարկի հետ:
2. Այլընտրանքի արժեք	բ. Այն ուսումնասիրում է առանձին սպառողների և գործարար ձեռնարկությունների վարքը:
3. Շուկա	գ. Լրացուցիչ /հավելյալ/ ծախք:
4. Արտադրության գործոններ	դ. Արժեք ունեցող անտեսանելի, ոչ շոշափելի և ոչ նյութական պարագաներ:
5. Սակավություն	ե. Այդ տնտեսագետները գտնում էին, որ բնական ռեսուրսները հարստության միակ աղբյուրն են:
6. Միկրոտնտեսագիտություն	զ. Համակարգ, որը ձևավորում է մեր՝ որպես սպառողների, գործարարների, վարձու աշխատողների կատարած ընտրության արդյունքում:

7. Սահմանային ծախք	է. Ցանկացած ապրանքի և ծառայության արտադրության համար պահանջվող բնական, մարդկային և կապիտալ ռեսուրսներ:
8. Ֆիզիոկրատներ	ը. Ապրանքների և ծառայությունների այն ծավալը, որից պետք է հրաժարվել այլ ապրանքներ կամ ծառայություններ ձեռք բերելու համար:
9. Ծառայություն	թ. Գիտություն, որը մեկնաբանում և վերլուծում է, թե ինչպես են մարդիկ կազմակերպում բարիքների արտադրությունն ու փոխանակությունը, որպեսզի ձեռք բերեն իրենց անհրաժեշտ ապրանքներն ու ծառայությունները:
10. Տնտեսություն	ժ. Համակարգ, որը մարդկանց թույլ է տալիս միմյանց հետ փոխանակություն կատարել:

Թեստ.

Նշեք այն տառը, որի բացատրությունը, ձեր կարծիքով, լավագույնս լրացնում կամ մեկնաբանում է առաջադրված դրույթի իմաստը:

1. Արտադրական հնարավորությունների սահմանագիծը ներկայացնում է

ա. տվյալ երկրի տնտեսական գործունեության վերլուծությունը,

բ. այն հնարավոր առավելագույնը, որը երկիրը կարող է արտադրել իր ունեցած ռեսուրսներով,

գ. գյուղատնտեսական կամ արդյունաբերական ապրանքներ արտադրելու օգուտները,

դ. ապրանքների և ծառայությունների այն քանակը, որը տվյալ երկրի կառավարությունը կորոշի արտադրել:

2. Արտադրության գործոնները

ա. բնական ռեսուրսներն են,

բ. կապիտալ ռեսուրսներն են,

գ. մարդկային ռեսուրսներն են,

դ. բոլոր վերը թվարկածներն են:

3. Սակավությունը

ա. բնորոշ է միայն թերզարգացած երկրներին,

բ. վիճակված է միայն աղքատ մարդկանց,

գ. բոլոր մարդկանց բոլոր պահանջմունքները բավարարելու անհնարինությունն է,

դ. հատուկ չէ մեծ սեփական ձեռնարկություն ունեցող մարդկանց:

4. Այլընտրանքի գինը

ա. այն հաջորդ լավ հնարավորությունն է, որից ստիպված ենք հրաժարվել տվյալ ընտրությունը կատարելիս,

բ. այն գինն է, որը հաստատվում է շուկայում գնորդների սակարկության միջոցով,

գ. այն գինն է, որը սահմանվում է կառավարության կողմից հատուկ ապրանքների և ծառայությունների համար,

դ. կախված է սպառողների պահանջարկից:

5. Տնտեսագիտություն իմանալն անհրաժեշտ է

ա. շատ փող կուտակելու համար,

բ. համալսարան ընդունվելու համար,

գ. սակավ տեղեկատվության և անորոշության պայմաններում լավագույն ընտրություն կատարելու համար,

դ. բոլոր վերը թվարկածները:

6. Շուկան մի վայր է, որտեղ

ա. կան վաճառասեղաններ և պահեստներ,

բ. գնորդներն ու վաճառողները փոխանակումներ են կատարում,

գ. վաճառողները առաջարկում են իրենց ապրանքները,

դ. քաղաքապետարանը թույլ է տալիս առևտուր կատարել:

7. Այդ տնտեսագետները գտնում էին, որ պետությունները պետք է գործեն միմյանց հետ մրցակցող վաճառականների պես.

ա. ֆիզիոկրատներ,

բ. մոնետարիստներ,

գ. դասական տնտեսագետներ,

դ. մերկանտիլիստներ:

8. Ապրանքի կամ ծառայության գինը

ա. սահմանում է Ազգային ժողովը,

բ. սահմանում է գների պետական կոմիտեն,

գ. այն գումարն է, որը ծածկում է արտադրողի ծախսերը և նրան ապահովում եկամուտով,

դ. այն գումարն է, որը գնորդները վճարում են վաճառողներին ձեռք բերած ապրանքի դիմաց:

9. Թվարկածներից ո՞րն է ծառայություն.

ա. կրթություն,

բ. համակարգիչ,

գ. դպրոցի շենք,

դ. գրենական պիտույքներ:

10. Ձեռներեցն այն անձն է, որը

ա. մասնագիտությամբ տնտեսագետ է,

բ. իրավունք ունի առևտրային ծրագրեր իրականացնել,

գ. մեծ կարողությունների տեր է,

դ. տնտեսական ռիսկի է դիմում առևտրային ծրագրերի իրականացման և շահույթ ձեռք բերելու նպատակով:

Պատասխաններ

Թեմա 1.

Հարց ու պատասխան

1-թ, 2-ը, 3-ժ, 4-է, 5-ա, 6-բ, 7-գ, 8-ե, 9-դ, 10-զ:

Թեստի պատասխաններ

1-բ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-գ, 6-բ, 7-դ, 8-դ, 9-ա, 10-դ:

Թեմա 5. Պահանջարկ, պահանջարկի օրենքը, կառուցվածքը և դրանց վրա ազդող գործոնները

Դասի ընթացքը.

Դասը սկսվում է սովորողներին բացատրելով պահանջարկի օրենքը, պահանջարկի վրա ազդող ոչ գնային գործոնները, առաձգականության բովանդակությունը: Հիմնավորելով բացատրել նաև, որ շուկայական տնտեսության մեջ առաջնային դերը պատկանում է պահանջարկին, որովհետև մարդկանց պահանջարկն է որոշում, թե ֆիրմաներն ի՞նչ բարիքներ պետք է արտադրեն: Որ պահանջարկը փոփոխող հիմնական գործոններն են սպառողների ճաշակի և նախասիրությունների փոփոխությունները, սպառողների եկամուտների փոփոխությունները, շուկայում սպառողների թվաքանակի փոփոխությունները, փոխարինող կամ լրացնող ապրանքների գների փոփոխությունները, եկամուտների՝ սպառողների սպասումների փոփոխությունները: Այսինքն՝ շուկայական տնտեսության մեջ առկա է սպառողի գերակայությունը արտադրողի նկատմամբ:

Կիրառվող մեթոդներ և հնարներ

Զրույց, հարց ու պատասխան, մտագրոհ, պրիզմա, տրամագիր, դասախոսություն, բանավեճ, թեստային աշխատանք, գործնական աշխատանք:

Գործնական աշխատանք.

Վարժություն: Պահանջարկի փոփոխության պատճառները

Ընթերցեք ստորև թվարկված խորագրերը: Յուրաքանչյուր իրավիճակի համար որոշեք, պահանջարկն աճում է, նվազում է, թ՞ե մնում է անփոփոխ:

Հիմնավորեք ներկայացված պատասխանները:

Խորագրեր

1. Տավարի մսի գինը մեծանում է :

Պահանջարկը----------

2. Հազարավոր ներգաղթողներ մեծացնում են Հայաստանի Հանրապետության բնակչության թվաքանակը:

Պահանջարկը ----------

3. Համաճարակաբանը զգուշացնում է, որ խոզի մսի օգտագործումը կարող է վտանգավոր լինել առողջությանը:

Պահանջարկը ----------

4. Հայաստանի Հանրապետության քաղաքացիների տնօրինվող եկամուտը նվազում է երրորդ ամիսն անընդմեջ:

Պահանջարկը ----------

5. Անցյալ տարի հասարակության մեծամասնությունը նախընտրում էր կրել դեղին կամ մանուշակագույն հագուստ, իսկ այս տարի՝ նարնջագույն: Դեղին կամ մանուշակակգույն հագուստի նկատմամբ

պահանջարկը----------

Հարց ու պատասխան

Պահանջարկ, առաջարկ, շուկայական հավասարակշռություն (ամփոփում)

Բ սյունակից ընտրեք Ա սյունակի յուրաքանչյուր տերմինին համապատասխանող նախադասությունը:

Ա սյունակ	Բ սյունակ
1. Գին	ա. Այն ստիպում է գնորդներին ավելի ուժգին մրցակցել իրենց անհրաժեշտ քանակության համար:
2. Պահանջարկի առաձգականություն	բ. Միմյանց փոխարինող ապրանքներ կամ ծառայություններ, որոնց օգտագործելու ցանկությունը կախված է գնից:
3.Փոխլրացնող ապրանքներ	գ. Երբ որևէ բարիքի սպառված հաջորդ միավորն ավելի քիչ բավականություն է պատճառում, քան նախորդը:
4. Նորաձևություն, տարվա եղանակ	դ. Այս ապրանքները սովորաբար սպառվում են միասին և առանձին չեն օգտագործվում:

5.Պահանջարկի օրենք	ե. Ապրանքի կամ ծառայության դրամական արժեքը:
6. Շուկայական հավասարակշռության գին	զ. Վաճառողներն ավելի շատ ապրանքներ են ցանկանում վաճառել տվյալ գնով, քան գնորդները ցանկանում են գնել:
7. Փոխարինիչներ	է. Պահանջարկի վրա գնի ազդեցության չափումը:
8. Պակասուրդ	ը. Այս գնի դեպքում առաջարկի ծավալը համընկնում է պահանջարկի ծավալի հետ:
9. Հավելուրդ	թ. Երբ այդ գործոնները փոխվում են, կարող է փոխվել նաև պահանջարկը:
10. Նվազող սահմանային օգտակարություն	ժ. Մնացած հավասար պայմանների դեպքում ցածր գնով ավելի շատ ապրանք կգնեն, քան բարձր:

Թեստ. Նշեք տառը, որի բացատրությունը, ձեր կարծիքով , լրացնում կամ մեկնաբանում է առաջադրված դրույթի իմաստը կամ պատասխանում է հարցին:

1. Պահանջարկ ասելով հասկանում ենք

ա. ապրանքի կամ ծառայության քանակությունը, որը սպառողները ցանկանում են գնել,

բ. ապրանքի կամ ծառայության քանակությունը, որը սպառողները կկարողանան գնել,

գ. ապրանքի կամ ծառայության քանակությունը, որը գտնվում է շուկայում,

դ. ապրանքի կամ ծառայության քանակությունը, որը սպառողները կցանկանան և կկարողանան գնել որոշակի ժամանակում հնարավոր տարբեր գներով:

2. Նվազող սահմանային օգտակարությունը

ա. որևէ բանից բավարարվածություն ստանալն է,

բ. որևէ ապրանք ձեռք բերելու հաճույքն է,

գ. որևէ բարիքի սպառված հաջորդ միավորի՝ նախորդից ավելի քիչ բավականություն ստանալն է,

դ. «ա» և «բ» տարբերակները:

3. Պահանջարկի կորը

ա. ձախից աջ վարընթաց կոր է,

բ. աջից ձախ վարընթաց կոր է,

գ. ձախից աջ վերընթաց կոր է,

դ. համընկնում է առաջարկի կորին:

4. Պահանջարկն առաձգական է, եթե

ա. գնի ազդեցությունը պահանջարկի քանակության վրա մեծ է,

բ. գնի ազդեցությունը պահանջարկի քանակության վրա փոքր է:

գ. գինը կախված չէ պահանջարկից,

դ. «բ» և «գ» տարբերակները:

5. Առաջարկը

ա. ապրանքների վաճառված քանակությունն է,

բ. այն քանակությունն է, որ ձեռնարկությունը կարող է արտադրել,

գ. այն քանակությունն է, որ ձեռնարկությունը ցանկանում է արտադրել,

դ. այն քանակությունն է, որ արտադրողը որոշակի ժամանակամիջոցում կարող է և ցանկանում է առաջարկել տարբեր գներով:

6. Առաջարկի կորը

ա. ձախից աջ վերընթաց կոր է,

բ. աջից ձախ վերընթաց կոր է,

գ. ձախից աջ վարընթաց կոր է,

դ. շրջանագիծ է:

7. Առաջարկի փոփոխության պատճառ կարող է լինել

ա. արտադրության սահմանային ծախքերի փոփոխությունը,

բ. արտադրողների թվի փոփոխությունը,

գ. սպասումների փոփոխությունը,

դ. բոլոր վերը թվարկվածները:

8. Հավասարակշռության գինը

ա. այն գինն է, որը սպառողը կցանկանար վճարել,

բ. այն գինն է, որն արտադրողը կցանկանար ստանալ,

գ. առաջարկվող ամենաբարձր գինն է,

դ. այն գինն է, որի դեպքում առաջարկն ու պահանջարկը հավասարվում են:

9. Գների խթանիչ գործառույթն առկա է, երբ

ա. գներն ազդում են վաճառքի հանված ապրանքների և ծառայությունների տեսականու և քանակի վրա,

բ. շահույթներն ավելանում են գների աճին զուգընթաց,

գ. առաջարկը պահանջարկից ավելի մեծ է,

դ. կառավարությունն է սահմանում շուկայական գները:

10. Երբ որևէ ապրանքի քանակը նվազում է, իսկ գինն աճում, արդյունքում ավելի քիչ մարդիկ են գնում դրանք: Այս սահմանումը ցույց է տալիս

ա. գների բաշխիչ գործառույթը,

բ. շուկայի վերահսկողության աստիճանը մի քանի մարդու կողմից,

գ. առաջարկի օրենքը,

դ. պահանջարկի օրենքը:

Պատասխաններ

Հարց ու պատասխան

1-թ, 2-ը, 3-ժ, 4-է, 5-ա, 6-բ, 7-գ, 8-ե, 9-դ, 10-զ:

Թեստ

1-բ, 2-դ, 3-գ, 4-ա, 5-գ, 6-բ, 7-դ, 8-դ, 9-ա, 10-դ:

Դասի պլանավորում

1. Դասի պլանավորման փուլերը

Դասավարդողի մասնագիտական որակներից մեկը դասը ճիշտ պլանավորելն է, դրա համար անհրաժեշտ է դասի խնդիրների և նպատակների հստակ գիտակցում: Այն ենթադրում է պատասխանել հետևյալ հարցերին՝

- Ի՞նչ սովորեցնել
- Ինչու՞ սովորեցնել
- Ինչպե՞ս սովորեցնել

Ելնելով զարգացող կրթության սկզբունքներից՝ դասավանդողը դասը պետք է պլանավորի այնպես, որպեսզի

- օգնի սովորողին ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերել,
- սովորեցնի սովորել,
- ուսուցման ընթացքում ծանրաբեռնվածությունն ընկնի ոչ թե սովորողի հիշողության, այլ մտածողության վրա,
- ուսուցումը լինի ոչ թե վերարտադրողական, այլ ստեղծագործական գործունեություն:

Սովորողները գիտելիքներ պետք է ստանան ոչ թե պատրաստի ձևով (դասախոսի հաղորդումից, դասագրքից) այլ ինքնուրույն, որոնողական, հետազոտական կամ համագործակցային աշխատանքի արդյունքում, ինչը սովորողների մեջ հետաքրքրություն է առաջացնում, դրական վերաբերմունք ձևավորում ուսման նկատմամբ, նպաստում դժվարությունների հաղթահարմանը, խթանում ստեղծագործական մտածողության զարգացմանը:

Մինչև դասը

Մինչև դասը մասնագետը պետք է փորձի պատասխանել իր դասի նպատակի, խնդիրների, նախադրյալների, գնահատման և ժամաքանակի մասին մի շարք հարցերի:

Հիմնավորում

- Ինչու՞ է դասն արժեքավոր:

- Ինչպե՞ս է այն առնչվում սովորողների արդեն սովորածին, իմացածին և այն թեմային կամ գաղափարներին, որոնք հետագայում պետք է սովորեն:
- Քննադատական մտածողության զարգացման ի՞նչ հնարավորություններ է ընձեռում այս դասը:

Խնդիրներ

- Հատկապես ի՞նչ գիտելիքներ և պատկերացումներ պետք է հետազոտվեն կամ հաղորդվեն:
- Սովորողներն ինչպե՞ս կարող են կիրառել այդ գիտելիքները և պատկերացումները:

Նախադրյալներ

- Այս դասն արդյունավետ կերպով յուրացնելու համար սովորողները նախապես ի՞նչ պետք է իմանան կամ արդեն կարողանան անել:

Գնահատում

- Սովորողի իմացության ի՞նչ ապացույցներ է պետք փնտրել:

Ռեսուրսներ և ժամաբաշխում

- Ինչպե՞ս պետք է բաշխվեն ռեսուրսները և ժամանակը առաջադրանքների, վարժությունների և գործողությունների միջև:

Խմբավորում

- Այս դասի համար ի՞նչ սկզբունքով կարելի է սովորողներին բաժանել խմբերի:

Բուն դասը

Ահա մի շարք հարցեր, որոնք կարող են օգնել դասի բուն ընթացքը պլանավորելիս:

Խթանում

- Ինչպե՞ս կարելի է օգնել, ուղղորդել սովորողներին, որ նրանք կարողանան ձևակերպել սովորելու իրենց նպատակներն ու հարցերը և վեր հանել, բացահայտել իրենց նախնական գիտելիքները:

Իմաստի ընկալում

- Սովորողները ինչպե՞ս են հետազոտելու նյութը:

Ինչպե՞ս են վերհսկելու նյութի սեփական ընկալումը:

Կշռադատում

- Սովորողներն ինչպե՞ս կարող են օգտագործել, կիրառել դասից սովորած նոր գաղափարները: Ինչպե՞ս պետք է նրանց ուղղորդել, որ խորհեն նոր գիտելիքի, գաղափարների մասին, գտնեն հարցերի պատասխանները, փնտրեն անորոշ կետերի պարզաբանումները:

Ամփոփում

- Ի՞նչ եզրակացությունների պետք է հանգել դասի ավարտին: Խնդիրները որքանո՞վ պետք է արդեն լուծված լինեն:

Ուսումնառության մեթոդների ընտրությունը

Ստորև տրված են մի շարք հարցեր, որոնց շուրջ արժի մտածել, ուսումնառական որևէ վարժության համար համապատասխան մեթոդ ընտրելիս:

1. Արդյո՞ք տվյալ մեթոդը համապատասխանում է նպատակին:

2. Մեթոդը գիտելիք, հմտություն, թե՞ կարողություններ է ձևավորում:

3. Արդյո՞ք մեթոդը ուսումնառության բազմակի ձևեր է խթանում:

4. Արդյոք ավելի շատ գիտելիքի, կարողությունների և հմտությունների անհրաժեշտություն չկա՞, քան այն, ինչ մասնակիցներն այդ պահին ունեն:

5. Որքա՞ն ժամանակ է անհրաժեշտ:

6. Որքա՞ն տարածք է պետք ունենալ:

7. Ի՞նչ օժանդակության կարիք կա. այդ օժանդակությունը առկա է, թե՞ ոչ:

8. Աշխատակազմը ինչպիսի՞ հատուկ հմտություններ պետք է ունենա: Նրանք իրավասու՞ են այդ հարցում, թե ոչ:

9. Աշխատակազմը տիրապետու՞մ է մեթոդին, թե ոչ: Իրենց դասավանդման ոճի մեջ նրանք արդյոք հետևողակա՞ն են:

10. Մեթոդը մասնակիցների համար հարմա՞ր է, թե ոչ. արդյո՞ք այն համապատասխանում է նրանց ակնկալիքներին:

11. Մեթոդը մասնակիցներից ակտիվ, թե՞ պասիվ մասնակցություն է պահանջում:

12. Սեմինարը վարողը որքա՞ն վերահսկողություն պետք է իրականացնի:

13. Մեթոդի ներկայացման արագությունը ինչպիսի՞ն պետք է փնի:

14. Արդյո՞ք դա նպատակին հասնելու հեշտագույն ճանապարհն է, թե պարզապես աննպատակ ցուցադրում է:

15. Ուրիշ ի՞նչ հարցեր կցանկանայիք ավելացնել:

ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԹՈԴՆԵՐ

- Ակտիվ մեթոդները ստեղծում են ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, որտեղ սովորողները սկսում են այնտեղից, որտեղից գիտեն. գիտելիքը դատարկ տեղում առաջաալ չի կարող. այն հենվում է սովորողների իրական հնարավորությունների ու բնական հետաքրքրությունների վրա, քանի որ ուղիղ համեմատական կապ գոյություն ունի ինֆորմացիայի, գիտելիքի և հետաքրքրությունների միջև. հաճախ, երբ ինֆորմացիան, նյութը անծանոթ է , այն սովորողների մեջ հետաքրքրություն չի առաջացնում.
- Ակտիվ մեթոդներն ապահովում են են ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, երբ գիտելիքը կապվում է սովորողների կենսափորձի հետ. այն օգնում է սովորողներին գտնել գիտելիքի և իրական կյանքի նրանց անձնական փորձառության փոխադարձ կապը.
- Ակտիվ մեթոդները ստեղծում են ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, որը ենթադրում է խմբային աշխատանք ու հետազոտություն, գիտելիքի ձեռք բերում համագործակցության միջոցով.

- Ուսուցման և ուսումնառության ակտիվ մեթոդները ստեղծում են հանդուրժողականության միջավայր, զարգացնելով սովորողների սոցիալական փոխազդեցության, շփման ու հաղորդակցման հմտությունները:
- Ակտիվ մեթոդները ստեղծում են ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, որը հնարավորություն է տալիս սովորողներին նյութի յուրացման ընթացքում ակտիվացնել, կենտրոնացնել, ընտրել կազմակերպել, միավորել ու կիրառել սովորածը .
- Ակտիվ մեթոդները ստեղծում են ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, երբ սովորողները տարբեր ոլորտների գիտական ձեռք բերումները օգտագործում են ոչ թե որպես իներտ գաղափարներ, «բանկային գիտելիքներ» ,այլ որպես նորը սովորելու միջոցներ, կենսական խնդիրներ լուծելու միջոցներ:
- Ուսուցման և ուսումնառության ակտիվ մեթոդները ստեղծում են ամեն անգամ գիտելիքը ինքնուրույն «կառուցելու» և նորը հայտնագործելու միջավայր. ի տարբարություն պասսիվորեն ձեռք բերած «փոխանցված գիտելիքի», հետազոտության շնորհիվ ակտիվորեն կառուցած գիտելիքը առավել արդյունավետությամբ է ընկալվում և յուրացվում, երկար է պահպանվում հիշողության մեջ, ունի կիրառական նշանակություն.
- Ակտիվ մեթոդները ստեղծում են ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, որտեղ ապավինում են ոչ այնքան սովորողների հիշողությանը, որքան՝ ինքնուրույն, քննադատական մտածողությանը: Ակտիվ մեթոդները ստեղծում են ուսուցման և ուսումնառության այնպիսի միջավայր, որտեղ էլ ավելի բարդանում ու բազմազան են դառնում ուսուցչի խնդիրները: Լասարաններում, որտեղ ուսումնական գործընթացի գլխավոր դերակատարը սովորողն է, սովորեցնողը դադարում է լինել գիտելիքի միակ աղբյուրը, կամ սովորողների իմացության միակ կերտողն ու նրանց զարգացման ղեկավարը: Ավելին, նա իր անձնական վարքով ցուցադրում է հետազոտող, փնտրող մտքի օրինակ , սովորողներին օգնում է ձեռք բերել , իսկ ապա և գործադրել սովորելու և իմաստավորելու ռազմավարական միջոցները.
- Ուսուցման և ուսումնառության ակտիվ մեթոդները ստեղծում են այնպիսի միջավայր, որը «հրահրում է» ինքնակրթությունը:Քանի որ այն

ապահովում է սովորելու հմտություն և շրջապատող աշխարհի հետ երկարատև մտավոր զրույց ու ճանապարհ.

«ՄՏԱԳՐՈՀ» ՄԵԹՈԴ

Կրթական, մանկավարժական տարբեր տեխնոլոգիաներում ու մոտեցումներում այսօր լայնորեն քննարկվում է ***մտագրոհի մեթոդը:***

Մասնագիտական գրականության մեջ հանդիպում են մեթոդի անվանման տարբեր ձևակերպումներ՝ «ուղեղային գրոհ» «մտավոր գրոհ» , «մտագրոհ», «մտքերի տարափ»: Մեթոդը մշակվել ու առաջադրվել է հոգեբան Ա.Օսբորնի կողմից, 1941թ.: Սկզբնապես այն կիրառվել է գովազդային բիզնեսում: Ներկայումս կրթության ոլորտում այն կիրառվում է բավականին լայն սպեկտորով.

- սովորողների ստեղծագործական մտածողությունը խթանելու,
- սովորողների ստեղծագործական մտքերը միավորելու,
- խմբային մտածողություն ստեղծելու ճանապարհով արդյունավետ քննարկումներ կազմակերպելու,
- կոնկրետ խնդիրներ (ուսումնական, գիտական) լուծելու,
- որոշումներ կայացնելու,
- համագործակցային ու սոցիալական հմտություններ մշակելու,
- երևակայությունը զարգացնելու,
- ինքնավստահություն ու համարձակություն ներշնչելու և այլ նպատակներով:

Իր դասական տարբերակում մտագրոհի մեթոդն ուղղված է սովորողների ստեղծագործական ընդունակությունների դրսևորման ու զարգացման համար անհրաժեշտ պայմանների ապահովմանը:

Ուստի այս համատեքստում էլ մարդու ստեղծագործական ընդունակությունների դրսևորման ու զարգացման համար անհրաժեշտ ուսումնական միջավայր ապահովելիս հարկ է հաշվի առնել անձի մի շարք հոգեբանական գործոններ:

Փորձենք հանգամանորեն կանգ առնել ու վերլուծել այդ գործոնները, քանզի հենց այդ գործոնների հաշվառմամբ են, մեր կարծիքով, կառուցվում մեթոդի քայլերն ու իրականացման տրամաբանությունը:

1. Մարդու միտքը զարգանում է խնդիրների լուծման ժամանակ: Մտածողությունը մի կողմից ***բացահայտում է,*** մյուս կողմից՝ ***նորի ստեղծում***: Մի դեպքում մենք գործ ունենք շրջապատող աշխարհի առարկաների ու երևույթների, նրանց միջև գոյություն ունեցող պատճառահետևանքային կապերի վերլուծման, համադրման ու գնահատման, մյուս դեպքում՝ նոր գաղափարների ձևավորման հետ: Առաջին դեպքում գործ ունենք ***փաստերի,*** դրանց հաստատման կամ ժխտման հետ. խնդրի լուծման ընթացքում, տվյալների ու փաստերի մասին «դատելիս» դրանք կա՛մ ընդունվում են, կա՛մ մերժվում: Իսկ ստեղծագործական մտածողության ժամանակ մարդն առավելապես գործ ունի ***անհայտի*** հետ, որի ձևավորման և արդյունքի համար հարկավոր է միանշանակ դրական մոտեցում և քաջալերանք:

Ինչ խոսք, մտածողության այս երկու դրսևորումները խնդիրների լուծման ժամանակ լրացնում և օգնում են միմյանց: Սակայն, երբ գաղափարները գտնվում են սաղմնային վիճակում, հարկավոր է ձեռնպահ մնալ, խուսափել քննադատությունից, հնարավորություն տալով նրան ձևավորվել: Երբ յուրաքանչյուր նոր ծնվող միտք անմիջապես բախվում է գնահատող դատողության, առաջանում է այսպես կոչված «վերլուծական կաթված», ինչը կտրուկ նվազեցնում է մտքերի հոսքը: Չէ՞ որ, սկզբունքորեն, մտածողության շնորհիվ ցանկացած միտք կարելի է քննադատել ու մերժել, ինչպես նաև համոզել ու հաստատել: Հետևաբար, որպես սովորողի ստեղծագործական ընդունակությունների դրսևորման ու բացահայտման անհրաժեշտ պայման հարկ է ընդգծել ***նոր մտքի, նոր գաղափարի նկատմամբ քննադատության բացակայությունը:***

Մտագրոհով խմբային քննարկումներ կազմակերպելիս որպես խումբ կարող են հանդես գալ և՛ զույգերը, և՛ խմբերը (3-5 մարդ և ավելի), և՛ ողջ լսարանը:

Մեթոդի հակիրճ ***սահմանումը.***

Մասնակիցների կամ սովորողների մտավոր ընդունակությունների, ստեղծագործական մտքերի միավորում, «խմբային ուղեղի» ստեղծում:

Մեթոդի ***նպատակները.***

- գիտական կամ ուսումնական խնդիրների լուծում.
- համատեղ որոշումների կայացում.
- ստեղծագործական մտածողության զարգացում.
- երևակայության խթանում.
- սոցիալական հմտությունների մշակում.

- համագործակցային հմտությունների մշակում.
- սովորողների մեջ ինքնավստահության ու համարձակության

ներշնչում:

Կանոններ, որոնք անհրաժեշտ է պահպանել մեթոդի կիրառման ժամանակ.

1. Ցանկացած քննադատության բացակայություն.
2. Մտքերի ու գաղափարների խրախուսում.
3. Մասնակիցների հավասարություն և ճնշման (հեղինակությունների, ղեկավարների, տարիքի ու փորձի, ուրիշների ու սեփական մտքերի և այլն) բացակայություն.
4. Մտքերի ու գաղափարների ազատ ու «անսահմանափակ» հոսք.
5. Բոլոր հնչած մտքերի գրանցում:

«Երկակի գրառման օրագիր»

Սովորողներին առաջարկվում է տետրի էջը բաժանել երկու հավասար մասի: Տնտեսագիտության դասը ընթերցելուց հետո էջի մի մասում նշել այն հատվածը, որն իրենց կարծիքով ամենակարևորն է, իսկ մյուս մասում մեկնաբանել, թե ինչու է այդ հատվածը կարևորում, ինչի մասին է այն իրենց մտածել տալիս: Դրանից հետո սովորողներն ընթերցում են իրենց հետաքրքրող հատվածները և արված մեկնաբանությունները: Ընթերցման ժամանակ պարզել, թե էլ ով է ընտրել ընթերցվող հատվածը և ինչպես է մեկնաբանել ընտրությունը:

Ցանկալի է, որ դասավանդողը նույնպես կարդա իր գրառումները:

«Հարցադրումներ»

Տեքստը բաժանվում է հատվածների: Լսարանը բաժանվում է մի քանի հոգուց կազմված թիմերի: Տեքստի յուրաքանչյուր հատված ընթերցելուց հետո թիմերը դադար են առնում և հերթով միմյանց հարցեր տալիս կարդացածի մասին: Ցանկալի է, որ դասավանդողը ևս մասնակցի այս վարժության կատարմանը՝ որպես թիմի անդամ: Նա սովորողներին կուղղի մի քանի դիպուկ հարց, որոնք սովորողներին մտածելու տեղիք կտան: Այն կօգնի, որպեսզի սովորողները խուսափեն պարզունակ, վերարտադրողական հարցերից և մտածեն, թե ինչ կարգի հարցեր է անհրաժեշտ առաջադրել:

Այս վարժությունը կարելի է օգտագործել նաև ամբողջ լսարանի հետ աշխատելիս: Սովորողները տեքստից ընթերցում են մի հատված, ապա դադարեցնում այն, փակուն գրքերը և դասավանդողին ուղղում իրենց հարցերը: Դրանից հետո նրանք ընթերցում են հաջորդ հատվածը: Այս անգամ դերերը փոխվում են: Դասավանդողը հանդես է գալիս հարցեր տվողի դերում: Նման հարցափոխանակությունից հետո կարելի է փոխել վարժության բնույթը՝ առաջարկել կանխագուշակել նյութի շարունակությունը և հիմնավորել:

ՓՈԽԳՈՐԾՈՒՆ ՆՇԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳ.

Փոխգործուն նշանների համակարգը նախատեսված է նոր նյութի, բովանդակության խորը յուրացման համար: Մեթոդն արդյունավետ է կարդալու միջոցով նյութի ընկալման ընթացքը վերահսկելու համար: Այս նշանների օգտագործումը ընթերցանության ժամանակ արտացոլում է սովորողի վերաբերմունքն ու առնչությունները տեքստի վերաբերյալ: Սովորողը ոչ միայն պարզապես ընթերցում է, այլև նշանների օգնությամբ համաձայնվում, տարակուսում, զարմանում, հակադրվում:Միանգամայն պարզ է, որ նյութի նմանօրինակ ընթերցումը արդեն իսկ ընկալում և խորը յուրացում է, նման որակների մասնակցությունը ընթերցման գործին նպաստում է ակտիվ, քննադատական ուսուցմանը՝ նորը, հակասականը և անհասկանալին ընդգծելու առումով:

Սովորողները նյութն ընթերցում են և միաժամանակ նշումներ կատարում՝ օգտագործելով հետևյալ նշանները.

v = Այս նշանը դրեք լուսանցքում այն մտքի կամ հատվածի առաջ, որը հաստատում է ձեր իմացածը, համընկնում է ձեր գիտեցածին:

+ = Այս նշանը դրեք լուսանցքում այն մտքի կամ հատվածի առաջ, որը ձեզ համար նորություն է պարունակում:

_-= Այս նշանը դրեք լուսանցքում այն մտքի կամ հատվածի առաջ, որը հակասում է ձեր իմացածին:

? = Այս նշանը դրեք լուսանցքում այն մտքի կամ հատվածի առաջ , որի ինֆորմացիան ձեզ համար լիովին համկանալի չէ և որի մասին ավելին կուզենայիք իմանալ:

Հարկ է նշել, որ կախված նյութի բովանդակությունից և սովորողների հնարավորություններից նշանների քանակը կարելի է կամ ավելացնել և կամ էլ սահմանափակել:

Փոխգործուն նշանների կիրառումը `

- ապահովում է սովորողների ներգրավվածությունը ուսումնական գործունեության մեջ,
- պահպանում է նրանց հետաքրքրությունը,
- հնարավորություն է տալիս սովորողներին վերահսկել սեփական ընկալումը, փորձելով ինֆորմացիան հարմարեցնել իրենց մտքում արդեն իսկ հաստատված իմացական կառույցների հետ:
- «ստիպում է» մի քանի անգամ ընթերցել նյութը, ինչն ապահովում է նյութի հիմնավոր ընկալում,
- մշակվում և զարգանում է գրելու կուլտուրան, սովորողները ոչ միայն ընթերցում են, այլև գրառումներ կատարում,
- նպաստում է խմբային աշխատանքի հմտությունների զարգացմանը,
- ապահովում է և՛ ընթերցում, և՛ գրավոր աշխատանք, և՛ քննարկում ու բանավեճ, և՛ տեսակետների բանավոր ներկայացում,
- խթանում է ինքնուրույն և ստեղծագործական մտածողությանը:

Կախված ուսումնական նյութի ծավալից: Այս մեթոդի կիրառումը բավականին երկար ժամանակ է պահանջում, մոտավորապես 30-35 րոպե: Մեթոդը հագեցած է գծագրական դասակարգիչներով:

«ԴԵՊՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ» ՄԵԹՈԴ

Այս մեթոդը բավականին երիտասարդ է, բայց և շատ արդյունավետ: Դասվում է ուսուցման և ուսումնառության ակտիվ մեթոդների շարքին:

Մեթոդն իրենից ներկայացնում է իրական կամ երևակայական իրավիճակների, կոնկրետ դեպքերի, հասարակական հնչեղություն ունեցող իրադարձությունների ներկայացում, մանրակրկիտ ուսումնասիրում ու քննարկում,

դրանց վերլուծություն ու գնահատում: Միանգամայն պարզ է, որ այդ աշխատանքը տևական ժամանակ է պահանջում:

Դեպքի ուսումնասիրության մեթոդը ծավալուն մեթոդ է և, կապված ուսումնասիրվող դեպքի բնույթից, իր մեջ ներառում է տարբեր մեթոդներ ու հնարներ՝ մտագրոհ, դասախոսություն, բանավեճ, դերային խաղ

Փաստորեն, «Դեպքի ուսումնասիրություն» մեթոդը դեպքի դերային ներկայացում է, դեպքի վերաբերյալ մտքերի փոխանակություն, տեսակետների հիմնավորում, փաստարկում, գաղափարների ազատ շարադրում, մտքերի գեներացիա:

«Դեպքի ուսումնասիրություն» մեթոդն ունի երեք հիմնական տարբերակ.

1.Երբ սովորողները քննարկում են իրավիճակ:

2.Երբ իրավիճակը ներկայացվում է սովորողների քննարկմանը առանց այդ մասին հայտնի եզրահանգումների և հնարավորություն է տրվում սեփական վերլուծությունները համեմատել հայտնի իրադարձությունների հետ:

3.Երբ դեպքը մտացածին է, երևակայական ու հնարավորություն է տալիս ամենատարբաեր քննարկումների ու լուծումների:

Մեթոդի կիրառումը սովորողներից պահանջում է.

- խնդրի բարձրացում,
- իրավիճակի ներկայացում կամ ցուցադրում,
- ներկայացնողի տեսակետի պարզաբանում,
- հարցի առնչությամբ տարբեր տեսակետների ունկնդրում և ընդունում,
- սեփական տեսակետների հիմնավորում ու փաստարկում,
- դեպքի վերաբերյալ գրավոր ու փաստացի նյութերի հետազոտում,
- ընդհանուր նկարագրությամբ գրավոր աշխատանք ,
- լուծման ելքերի առկայություն կամ բացակայություն,
- նյութի մատուցում որպես որպես համաձայնեցված որոշման ուսումնասիրություն:

« Դեպքի ուսումնասիրություն» մեթոդն ապահովում է տեսական նյութի առավել խորը և իրատեսական ըմբռնում ու յուրացում կոնկրետ դեպքերի, իրադարձությունների , փաստարի և օրինակների ուսումնասիրության ու

վերլուծության միջոցով: Հարկ է նշել, որ այն, ստեղծագործական մոտեցման արդյունքում, կարող է կիրառվել նաև այլ առարկաներ ուսուցանելիս:

Այն հնարավորություն է տալիս մոդելավորել իրական դեպքերը և նրանց արձագանքել առավել սթափ, առանց խիստ հուզական ռեակցիաների ու տագնապի:

Դեպքի ուսումնասիրության համար ստեղծված միջավայրը արդյունավետ իրավիճակ է ստեղծում խմբային աշխատանքի կազմակերպման, միջանձնային շփումների մշակման, երկխոսություններ ու բանավեճեր վարելու կուլտուրայի ձևավորման համար:

Զարգացնում է տրամաբանական մտածողությունը, քանի որ այն ենթադրում է որոշակի դատողություններ անել, զարգացնել ու պաշտպանել դրանք, համաձայնվել ու չհամաձայնվել հնչած տեսակետների հետ, պատճառաբանել համապատասխան վերաբերմունքը, խմբային վերլուծության արդյունքում որոշումներ ու եզրակացություններ անել:

Որպես խիստ բնութագրական կողմ «դեպքի ուսումնասիրություն» մեթոդը «պահանջում է» փաստարկում, սեփական մոտեցումների հիմնավորում հիմնված՝

- խնդրի վերաբերյալ հայտի մասնագետների ու գիտնականների տեսական մոտեցումների ու դատողությունների վրա,
- գիտասկան աղբյուրների և տվյալների հիշատակման վրա,
- հարցի շուրջ արված հետազոտությունների տվյալների, ցուցանիշների ու պրակտիկ փորձերի վրա,
- սեփական փորձառության ու դիտարկումների վրա,
- իրական կյանքում եղած երևույթների, օրինակների հիշատակման վրա:

«Դասախոսություն»

Դասախոսությունը ուսուցման ավանդական և շատ կիրառվող մեթոդներից է, և չնայած ժամանակակից մեթոդների բազմազանությանը, այսօր էլ դասախոսությունն է ձևավորում նյութի փոխանցման հիմքը: Դասախոսությունը մենախոսություն է, այն տեղեկատվության,հաղորդվող նյութի բանավոր ներկայացումն է դասախոսի կողմից: Դասախոսը, տեղեկատվությունը, գիտելիքը փոխանցում է սովորողների խմբին, իսկ սովորողների խնդիրն այն լսելը , ընկալելն

ու մտապահելն է:Նման գործընթացում հաղորդակցումն ընթանում է մեկ ուղղությամբ, մեկ գծով՝ դասախոսից սովորող: Հետևաբար մենք կարող ենք ասել, որ դասախոսությունը պասսիվ գործընթաց է: Դասախոսության տևողությունը պետք է համապատասխանի ունկնդիրների ուշադրության կենտրոնացմանը մոտավորապես 20րոպե, բայց որոշ դեպքերում կարող է տևել ավելի՝ փոխելով նյութի ներկայացման ոճը, ձևը, արագությունը՝ կիրառելով դադարներ՝ նյութեր բաժանելու և կամ հարց ու պատասխանի համար:

Քանի որ իր բնույթով դասախոսությունը ենթադրում է պասսիվ ուսուցում, դասախոսության ընթացքում հարկ է կիրառել մի շարք հնարներ **սովորողներին ուսուցման գործընթացի մեջ առավելագույնս ներգրավելու** համար: Նրանց **միտքն արթուն պահելու համար** անհրաժեշտ է ընտրել նյութ, որը կոգևորի ու կհետաքրրի սովորողներին: Նման մոտեցում ապահովող դասախոսությունն իր մեջ ընդգրկում է.

անսպասելի, անսովոր, երբեմն հակասական, հարցադրումով, «հրահրող» **ներածություն,**

տեղին մեջբերում (քիչ հայտնի փաստ),

փաստ,

առնչություններ իրականության հետ, օրինակներ կյանքից, զուգահեռներ սովորողների փորձի հետ,

փաստ,

ոգևորող եզրակացություն:

Ինչպես տեսնում ենք, նման կառույցում փաստերի փոխանցումը մեկ ու մեջ, պարբերաբար համեմվում է անսպասելի դեպքերով, օրինակներով:

Սովորողների կողմից նյութի ընկալումն ու յուրացումը արդյունավետ դարձնելու համար անհրաժեշտ է դասախոսության նյութը պլանավորել, կառուցել որոշակի հերթականությամբ, հաջորդականությամբ՝ հնարավորություն տալով սովորողներին մտածել յուրաքանչյուր քայլի մասին, ամփոփել յուրաքանչյուր հարաբերականորեն ավարտուն մաս, շեշտել և կրկնել դասախոսության հանգուցային մասերը:

Սովորողների մտածողությունը ակտիվացնելու և ուշադրությունը գրավելու գործում մեծապես կարևորվում են հարցերը, հատկապես հռետորական հարցերը, որոնք չեն ակնկալում ստանալ պատասխաններ, այլ դասախոսի միտքը զարգացնելու համար են: Հաղորդվող նյութը ձևակերպվում է հարցադրումների տեսքով, որոնց հերթով պատասխանելով դասախոսը հենց մատուցում է նյութը: Ցանկացած դեպքում, երբ դասախոսը դիմում է հարցերի, սովորողների մոտ դրանց

նկատմամբ ռեակցիա է առաջանում, անգամ , եթե չկա անմիջական հնարավորություն դրան պատասխանելու:

Ուսումնական գործընթացում սովորողների ներգրավվածությունը մեծացնելու նպատակով կարելի է ինչ-որ պահի (հարաբերական ավարտուն մասերից հետո կամ էլ դասախոսության ավարտին) ընդհատել դասախոսությունը և ուսանողներին հարցեր ուղղել,ւ, զրույց ծավալել:

Ձևով մատուցվող նյութի յուրացման մակարդակը բարձրացնում են տեսողական ամենաբազմազան նյութերի կիրառումը. նկարազարդումներ, իլյուստրացիաներ, սխեմաներ, գրաֆիկներ, գրանցումներ գրատախտակին և այլն:

Դասախոսությունը առավել աշխույժ ու կենդանի է դարձնում նաև դասախոսի աշխույժ,կենդանի խոսքը, առոգանությունը, ձայնի բարձրության տատանումները, շեշտադրումները, դադարները, ինչպես նաև նրա դիմախաղն ու ժեստերը:

Մեթոդի առավելությունները.	**Մեթոդի սահմանափակումները.**
1. Այն շատ լավ գործում է մեծ խմբերի հետ աշխատելիս: (Բոլորի հետ միաժամանակ և արագ:)	**1.** Պասիվ ուսուցում:
2. Դասախոսության բովանդակության տրամաբանական բաժանումը ավելի հեշտացնում ու հասկանալի է դարձնում յուրացումը:	**2.** Ամրապնդման բացակայություն, ավելի շուտ՝ հետադարձ կապի.դժվարանում է սովորողների յուրացման գնահատումը:
3. Ժամանակի հստակ բաշխում և վերահսկում:	**3.** Մեծ պահանջներ դասախոսի անձին, փաստորեն գործընթացն ամբողջությամբ ծանրանում է դասախոսի ուսերին:
4. Շնորհիվ դասախոսության բովանդակության վերահսկման ու պլանավորման՝ ինչ-որ բան բաց թողնելը և կամ լրացուցիչ ասելը վտանգավոր չէ:	

Դաշտային աշխատանք կամ էքսկուրսիա

Այցը կազմակերպելու համար անհրաժեշտ է, որ այն ունենա.

• Թեմա
• Վայր, ժամանակ
• Հստակ նպատակ, խնդիրներ
• Հետազոտական աշխատանքներ
• Տվյալ թեմային վերաբերող ուսումնասիրություն
• Թեմային վերաբերող նպատակ, խնդիրներ
• Հստակ հրահանգներ
• Ծանոթացում, հիշեցում վարքի կանոնների պահպանման մասին

Ուսուցչի պարտականությունները.

• Կապվել օբյեկտի ղեկավարության հետ
• Նախապես այցելել և պայմանավորվել ղեկավարության հետ

Այցի ընթացքը

• Պաշտոնական ներկայացում (երեխաներին և ղեկավարությանը)
• Եթե խումբը մեծ է, կարելի է այն բաժանել երկու մասի
• Դիտարկումների ժամանակ աշակերտները կատարում են գրառումներ և հարցեր տալիս
• Ինչ խնդիրներ լուծելու համար են այս այցերը
• Ինչ է կատարվել այցը կատարելուց հետո
• Այցից հետո գրել ակնարկ

Դերային խաղ

Նկարագրությունը և նպատակը

Դերային խաղը ուսման կամ փորձի հարստացման միջոց է խմբի մասնակիցներին անսպասելի իրավիճակներ առաջարկելու ձևով, որոնցում անհրաժեշտ է ընդունել որևէ դեր կամ տեսակետ, այնուհետև փորձել դա հասունացնել և ավարտել:

Ընթացքը

Դերային խաղից մեծ օգուտ քաղելու համար պետք է առաջարկվող իրավիճակները հնարավորինս մոտ լինեն իրականությանը: Անհրաժեշտ է բավարար ժամանակ տրամադրել դերային խաղում ներգրավված դերերը (կերպարները) նկարագրելու համար և համոզվել, որ խաղի համար ստեղծված պայմանները առավելագույնս համապատասխանում են մասնակիցների հիմնական գործունեությանը:

Դերային խաղի հրահանգներում պետք է մանրամասն նկարագրվի իրավիճակի բոլոր կողմերը: Միաժամանակ հրահանգը պետք է խիստ սահմանափակումներ չունենա, որպեսզի չխանգարի մասնակիցներին այդ դերը խաղալ իրենց պատկերացումներին համապատասխան: Դերային խաղերը կարող են ունենալ հստակ կառուցվածք կամ ազատ լինել:

Խնդիրը, որի լուծման վրա աշխատում են դերային խաղի մասնակիցները (կարող են մասնակցել մեկ կամ մի քանի հոգի), կոնկրետ մարդկանց առօրյա կյանքին բնորոշ վարքային մոդելի ստեղծումն է:

Անհրաժեշտ է նշել, որ դերային խաղից հետո քննարկման առարկա է դառնում մասնակիցների վարքը, ոչ թե նրանց ընդունակությունները:

Դերային խաղի կիրառման ընթացքում խումբը պետք է հետևի այդ խաղի ընթացքին: Նա, ով չի մասնակցում խաղին, դիտորդի դեր է կատարում. նշումներ է անում դերային խաղի մասնակիցների վարքի և դրա հետևանքների վերաբերյալ: Դերային խաղի ավարտը որոշում է դասավանդողը:

Դերային խաղը հաճախ կառուցվում է պոտենցիալ կոնֆլիկտների շուրջ, որոնք առաջանում են թյուրիմացություններից: Այն օգտակար է, երբ փորձում են ցույց տալ, որ նույն թեմայի շուրջ տարբեր մարդիկ տարբեր կարծիքներ ունեն:Դերային խաղի համար ցանկալի է ընտրել հետաքրքիր և տարբեր տեսակետներ պարունակող թեմաներ, հետևաբար դրան մասնակցողները պետք է ներկայացնեն տարբեր տեսակետներ:

Խորհուրդներ դասի վարման վերաբերյալ.

- մշակել մանրակրկիտ պլան
- դերային խաղը անցկացնել տեղին
- ցանկալի է, որ խմբերը լինեն փոքր
- ստեղծագործաբար կիրառել թեմայի վերաբերյալ ունեցած գիտելիքները

Ինչպես բաժանել դերերը.

Կարելի է կիրառել մի քանի հնարներ.

- դերերի պատահական բաշխում
- սկզբում բաժանել գլխավոր դերերը, մնացածը՝ ըստ ցանկության,
- դերերը տալ ըստ համապատասխան դերաբաշխման,
- ընտրել այնպիսի մասնակիցներ, որոնք ունեն առաջարկվող դերի հակառակ որակները,

- ընտրությունը թողնել մասնակիցներին,

Դերերի բաժանումը կախված է դերային խաղի նպատակից և կոնկրետ խմբի առանձնահատկություններից:

ՄԵԹՈԴԻ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Ձեռք բերած փորձը պահպանվում է երկար.

«Ուսուցումը գործողությունների միջոցով». դա ուսման և փորձի ձեռք բերման արդյունավետ ձևերից մեկն է: Սեփական ապրումները հիշվում են երկար:

2. Հաճելի լինելը.

Դերային խաղը գիտելիքների և հմտությունների ձեռք բերման համեմատաբար հաճելի ձև է:

3. Այլ մարդկանց վարքի պատճառները հասկանալը.

Դերային խաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս հասկանալ, թե ինչպես են իրենց զգում այլ մարդիկ, երբ առնչվում են ինչ-ինչ իրավիճակների հետ: Այդ զգացումը կարող է դառնալ ուսման հզոր գործիք, այն կարող է նպաստել այլ մարդկանց վարքի պատճառները հասկանալու ունակության զարգացմանը, ինչին դժվար է հասնել այլ մեթոդներով:

4. Անվտանգ պայմանները.

Դերային խաղի կիրառումը ունի ռիսկի մեծ գործոն, որը գլխավորապես վերաբերվում է խմբի ռեակցիային, այլ ոչ թե խաղի ազդեցությանը խմբի մասնակիցների վրա:

Դերային խաղը մասնակիցներին հնարավորություն է տալիս յուրացնել, ամրապնդել վարքի տարբեր մոդելներ: Այստեղ առավելությունը ապահով, անվտանգ միջավայրն է այս կամ այն մոդելը կիրառելու համար:

ՄԵԹՈԴԻ ՍԱՀՄԱՆԱՓԱԿՈՒՄՆԵՐԸ

1. Արհեստականությունը.

Դերային խաղը արդյունավետ է, երբ ստեղծվում է իրականին մոտ իրավիճակներ: Եթե խումբը զգում է, որ խաղի սցենարը իրական չէ, հաշվի չի առնում իրական գործունեության որոշ կարևոր կողմեր և խաղը կարող է արժեզրկվել, ինչի արդյունքում չեն իրականանա ուսուցման նպատակները:

2. Մասնակիցների կողմից հնարավոր ոչ լրջմիտ վերաբերմունքը.

Եթե վարժության նպատակը բացահայտված է մասնակի և շեշտը դրված է ոչ թե խաղի իրականացման կարևորության, այլ դերասանական ընդունակությունների վրա, ապա վտանգ կա, որ խաղը կընկալվի որպես զվարճանք: Իհարկե, վարժանքի լուրջ նպատակները չեն խանգարում հաճույք ստանալ դրան մասնակցելուց կամ ընթացքում կատակելուց:

3. Ռիսկի գործոնը.

Ինչպես ուսուցման ակտիվ յուրաքանչյուր մեթոդ, որը ենթադրում է մասնակիցների ներգրավվածություն, դերային խաղը նույնպես ունի ռիսկի գործոն: Խաղն արդյունք է տալիս, երբ խումբը պատրաստակամ է ներգրավվել դրանում: Եթե խմբի անդամները վախենում են կորցնել դեմքը կամ ամաչում են հենց խաղին մասնակցելուց, ապա այն անարդյունավետ կլինի: Այն փաստը, որ ուսումնառության նման գործընթացը վերահսկվում է, լրացուցիչ լարվածության տեղիք է տալիս:

Դերային խաղը ցանկալի է կիրառել այն դեպքում, երբ մասնակիցները հաղթահարել են տագնապը և զգում են, որ իրենց ինքնագնահատականին ոչինչ չի սպառնում

Գրականության ցանկ

1. Գոռքնի Ջ. և ուրիշներ, Տնտեսագիտություն, Երևան, 1999թ.
2. Սամուելսոն Փ., Նորդհաուս Ու., Տնտեսագիտություն, Երևան, 1995թ., մաս 1:
3. ԾՈՍՍՏվպս Խ., ըՐ՚ հ., ՆՍՏվՏՎՌՍր, Ծ, 1992չ. .
4. Կիրակոսյան Գ.Ե., Կիրառական տնտեսագիտություն, Երևան 2004թ.,
5. Ղուշչյան Հ.Բ., Կիրառական տնտեսագիտություն, Երևան, 2004թ.,
6. Մարզպանյան Հ.Ա., Կիրառական տնտեսագիտություն, Երևան, 2004թ.,
7. Աղաջանյան Հ., Տնտեսագիտություն, Երևան, 2009 թ.,
8. ԺՋ . ԽՌվփ, Ծ. ձՈՑՑր, Ժ. ձֆվՉՏՐՑ, ԾպՋՊցվՈՐՏՊվՈ՚ ՆՍՏվՏՎՌՍՈ: ձփպովՏպ տՏրՏՈՌպ
9. Ծ.ծ. ճպտցՐՌվ, Ժ.Ը. ԽՌրպսպՉՈ, ԽցՐր ֆՍՏվՏՎՌփպրՍՏռ ՑպՏՐՌՌ, ԽՌՐՏՉ, 2005չ.,
10. ԽցՐր ֆՍՏվՏՎՌՍՌ, ցփպովՌՍ, տՏՊ ՐպՊ. ը.Ը. ՀպռջպվոպՐչՈ, Ծ., 1997չ.,
11. ԼՏւՌվ Թ. շ. , ՆՍՏվՏՎՌփպրՍՈ՚ ՑպՏՐՌ՚, ցփպովՌՍ, Ծ., 1997.,
12. Տնտեսագիտության տեսություն, ուսումնական ձեռնարկ, ԵՊՏԻ, Երևան, 2000թ.,
13. Գրիգորյան Վ., Տնտեսագիտության տեսություն, Երևան, 1999թ.,
14. Գևորգյան Մ., Տնտեսագիտության տեսություն, Երևան, 1997թ.,
15. Ներսիսյան Կ.Ռ., Տնտեսագիտության տեսությունը որպես գիտություն և նրա զարգացման փուլերը, Երևան, 2000թ.: